Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 264 - Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽԻՆ»

1.	Ծրագրի նպատակը	Ադրբեջանի կողմից Հայաստանից Արցախ էլեկտրաէներգիա մատակարարող բարձրավոլտ կապի վնասումը և գազամատակարարման հաճախակի ընդհատումները հանգեցրել են ծանր էներգետիկ վիճակի: Հենվելով միայն սեփական սահմանափակ էլեկտրաէներգիայի վրա՝ Արցախի էներգետիկ ենթակառուցվածքներն աշխատում են մեծ ծանրաբեռնվածությամբ և միայն մասամբ են կարողանում ապահովել բնակչության պահանջները: Ըստ այդմ այս ծրագիրը նպատակ ունի նպաստել Արցախի էներգետիկ անկախության բարձրացմանը՝ արևային ջրատաքացուցիչներ տրամադրելով Մարտակերտի շրջանի Կոճողոտ և Վերին Հոռաթաղ չգազաֆիկացված համայնքների բնակիչներին: Այն թույլ կտա վերջիններիս ամբողջ տարին ունենալ տաք ջուր՝ առանց էլեկտրաէներգիայից կախման մեջ լինելուց, ինչը, հաշվի առնելով Արցախի ներկայիս էներգետիկ ծանր վիճակը, կնվազեցնի նաև էլեկտրական ցանցերի ծանրա-բեռնվածությունը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ) (գրանցված՝ ԱՄՆ, Դելավերի նահանգ, Նյու Քեսլ համայնք, 19808 ք. Վիլմինգտոն, Սենթրվիլ փ. 2711, #400 հասցեում, «29» մարտի 1955թ., գրանցման թիվ՝ 0486313)
4.	Ծրագրի կատարողը	Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուց-չություն (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Մելիք-Ադամյան 2/2, ՀՎՀՀ՝ 00006479)

5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետություն, Մարտակերտի շրջան, Կոճողոտ և Վերջին Հոռաթաղ համայնքներ, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	35,108,392 դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Կոճողոտ և Վերջին Հոռաթաղ համայնքների բնակիչներ
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի մայիսի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Արևային ջրատաքացուցիչների մատակարարում և տեղադրում: Նախատեսվում է իրականացնել 2023 թ. մայիսի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 35,108,392 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Արևային ջրատաքացուցիչների մատակարարում և տեղադրում՝ 35,108,392 դրամ՝ առանց ԱԱՀ-ի:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հաշվետվություն ներկայացնել ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

10.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ